ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

0012, ք. Երևան, Վ.Վաղարշյան 13ա, հեռ.(ֆաքս)՝ 011 90 00 02

№ 18-1467-15

«23» 06. 2015 թ.

«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության նախագահ Արթուր Սաքունցին
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի պողոտա 59

Հայտնում եմ, որ Ձեր դիմումի հիման վրա նախապատրաստված նյութերով ՀՀ հատուկ քննչական ծառայությունում որոշում է կայացվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով քրեական գործ հարուցելը մերժելու մասին:

Կից ուղարկելով որոշման պատճենը՝ պարզաբանում եմ, որ որոշումը դրա պատճենը ստանալու պահից 7 օրվա ընթացքում Ձեր կողմից կարող է բողոքարկվել դատախազին:

Առդիր՝ որոշման պատճենը 3 թերթ:

Խոշտանգումների և մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալ՝ ***Վ. Ավետիսյան***

Հեռ.՝ 011-900-040, 094-426-425

ՈՐՈՇՈՒՄ

Քրեական գործ հարուցելը մերժելու մասին

23 հունիսի, 2015թ. **ք. Երևան**

ՀՀ հատուկ քննչական ծառայության խոշտանգումների և մարդու դեմ ուղղված հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալ Վ. Ավետիսյանս, քննարկելով «Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության նախագահ Արթուր Սաքունցի կողմից 2015թ. հունիսի 3-ին ՀՀ գլխավոր դատախազին ուղղված դիմումի հիման վրա նախապատրաստված նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ

«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության նախագահ Արթուր Սաքունցը 2015թ. հունիսի 3-ին գրությամբ դիմել է ՀՀ գլխավոր դատախազին, որով խնդրել է ՀՀ ԱԺ պատգամավոր Առաքել Մովսիսյանի նկատմամբ քրեական գործ հարուցել՝ վերջինիս կողմից կոչեր և սպանության սպառնալիքներ տալու համար: Դիմումին կից ներկայացրել է նաև էլեկտրոնային կրիչ, որի վրա զետեղված է Ա. Մովսիսյանի հարցազրույցը:

Արթուր Սաքունցի դիմումը քննարկման համար ուղարկվել է ՀՀ հատուկ քննչական ծառայություն:

Նյութերի նախապատրաստման ընթացքում պարզվել է, որ ՀՀ ԱԺ պատգամավոր Առաքել Մովսիսյանը 2015թ. մայիսի 31-ին «Fnews» լրատվական կայքի լրագրողի հետ զրույցի ընթացքում, անդրադառնալով ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի ընտանիքի անդամների վերաբերյալ զանգվածային լրատվության միջոցներով վարկաբեկիչ նյութեր տարածողներին, առանց կոնկրետ անուններ տալու կամ հասցեատիրոջը նշելու՝ հայտնում է. «...էդ սրիկաները էդքան մեղք չունեն, ինչքան իրանց պապաները, իրանց պապաներին պետք ա անպայման ճարվի և գլխատվի, որովհետև դրանց ընտանիքները, երևակայի, «տուն», «տեղ», «ընտանիք» հասկացողություն չունեն՝ նման ընտանիքի վարկաբեկելու համար և Ազգային հերոսի նման կարգավիճակի հասցնելու համար: Ես չեմ պատկերացնում, Աստված տա, իմ ձեռքը որ ընկնի, ես անձամբ կգլխատեմ...», այնուհետև նշում է. «...կոչ եմ անում վեր ընկնեն իրանց տեղը, Աստված մի արասցե, որ բռնեցինք, իրանք հաստատ բռնաբարվելու են»:

Արթուր Սաքունցի դիմումի և Առաքել Մովսիսյանի հարցազրույցի տեսաձայնագրության ուսումնասիրման արդյունքում պարզվել է, որ վերջինիս արարքում բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիք տալու հանցակազմը հետևյալ պատճառաբանությամբ:

Այսպես՝ ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով հանցագործություն է համարվում սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիքը, եթե այդ սպառնալիքն իրականացնելու իրական վտանգ է եղել:

Ակնհայտ է, որ քննարկվող հանցակազմի պարտադիր հատկանիշներից է սպառնալիքի իրական լինելը: Այն իրական է համարվում, երբ տուժողը բավարար հիմքեր է ունենում անհանգստանալու, վախենալու դրա իրականացումից, կարծում է, որ տրված սպառնալիքի իրականացումը հնարավոր է: Սպառնալիքի իրական լինելը որոշվում է ինչպես օբյեկտիվ իրադրության գնահատմամբ (սպառնալիքի բովանդակությունը, այն տալու եղանակը, դեպքի վայրը, ժամանակը, իրադրությունը, հանցավորի անձը և այլն), այնպես էլ տուժողի սուբյեկտիվ ընկալումը հաշվի առնելով: Պետք է նկատի ունենալ, որ տուժողի սուբյեկտիվ ընկալումն ամեն դեպքում արարքի որակման համար ածանցյալ նշանակություն ունի, առաջնայինն օբյեկտիվ իրադրության գնահատումն է: Քննարկվող հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է միայն ուղղակի դիտավորությամբ: Այսինքն՝ հանցավորը պետք է գիտակցի, որ սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիք է արտահայտում և ցանկանա կատարել դա:

Առաքել Մովսիսյանը 2015թ. մայիսի 31-ի իր հարցազրույցում խոսքը չի ուղղում կոնկրետ անձի, այլ ընդամենն իր բացասական դիրքորոշումն է արտահայտում ՁԼՄ-երով նմանատիպ տեղեկություններ տարածող անորոշ շրջանակի անձանց վերաբերյալ՝ նրանց արարքը համարելով ոտնձգություն այնպիսի արժեքների նկատմամբ, որոնց պաշտպանությունը փոխաբերական իմաստով պետք է իրականացվի ընդհուպ «գլխատման» պատժի սպառնալիքով: Ակնհայտ է, որ նրա խոսքն իր մեջ ընդհանրապես սպառնալիքն իրականացնելու իրական վտանգ չի պարունակում:

ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք...»: «Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք, ներառյալ՝ տեղեկություններ և գաղափարներ փնտրելու, ստանալու, տարածելու ազատությունը, տեղեկատվության ցանկացած միջոցով՝ անկախ պետական սահմաններից»:

ՀՀ քրեական օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին համաձայն՝ «Անձը ենթակա է քրեական պատասխանատվության **միայն հանրության համար վտանգավոր այնպիսի գործողության կամ անգործության** և հանրության համար վտանգավոր հետևանքների համար, որոնց վերաբերյալ նրա մեղքը հաստատված է իրավասու դատարանի կողմից»:

Քրեական օրենքով պատժելի է համարվում միայն հանցավոր **արարքի** կատարումը, ինչը նշանակում է, որ անձը չի կարող պատասխանատվության ենթարկվել իր արտահայտած մտքերի, գաղափարների համար: Անգամ հանցավոր գաղափարների, դիտավորության բացահայտումը, եթե այն չի դրսևորել որևէ արարքով, հանցագործություն չի համարվում, և, հետևաբար, պատժելի չէ:

Վերը նշվածը համադրելով նաև Առաքել Մովսիսյանի կողմից «գլխատելու» և «բռնաբարելու» խոսքերն արտաբերելու տեղի, ժամանակի, եղանակի, տոնի և մյուս հանգամանքների հետ, ակնհայտ է դառնում, որ խոսքի գլխավոր շեշտադրումը կատարված է ո՛չ թե գործողության՝ «գլխատելու», «բռնաբարելու» վրա, այլ այն հանգամանքի, թե, ըստ իր կարծիքի, ընդհանուր առմամբ ի՞նչ գնահատականի են արժանի ՀՀ պաշտպանության նախարարին ու նրա ընտանիքին վարկաբեկող, անբարո տեղեկություններ տարածողներն ու նրանց հովանավորողները: Ա. Մովսիսյանի նշված խոսքում արված հայտարարությանը չի կարող հանդիսանալ և ընկալվել սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ խոշոր չափի գույք ոչնչացնելու սպառնալիք, քանի որ այն իրական և կոնկրետացված չէ, ուղղված չէ որևէ անձի կամ անձանց շրջանակի դեմ:

Գտնում եմ, որ Առաքել Մովսիսյանի խոսքերի ողջամիտ գնահատումը հանգեցնում է այն համոզման, որ նրա արարքում բացակայում են ինչպես ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի հատկանիշները, այնպես էլ որևէ այլ հանցակազմի հատկանիշներ:

ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքի հանցակազմի հատկանիշների մեկնաբանությունը ՀՀ վճռաբեկ դատարանը տվել է Վլադիկ Խաչատրյանի վերաբերյալ 2012թ. հունիսի 8-ին կայացված նախադեպային որոշմամբ, որի լույսի ներքո ևս՝ Առաքել Մովսիսյանի արարքում բացակայում են հանցակազմի օբյեկտիվ ու սուբյեկտիվ հատկանիշները:

Այսինքն, պետության օրենսդիր մարմնի ներկայացուցչի՝ Ազգային ժողովի պատգամավորի կողմից զանգվածային լրատվության միջոցով հրապարակային արված վերը նշված արտահայտությունները սպանության կամ առողջությանը ծանր վնաս պատճառելու իրական սպառնալիք չեն հանդիսացել, դրանք իրականացնելու իրական վտանգ չի եղել, որպիսի պայմաններում բացակայում է քրեական քրեական գործ հարուցելու հիմքը՝ այն փաստական տվյալները, որոնք վկայում են կատարված կամ նախապատրաստվող հանցագործության մասին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ, 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 55-րդ հոդվածի 2-րդ մասով, 180-181-րդ, 185-րդ, 190-րդ հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Նախապատրաստված սույն նյութերով քրեական գործ հարուցելը մերժել՝ Առաքել Մովսիսյանի արարքում ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցակազմի բացակայության հիմքով:
2. Որոշման պատճենը նյութերի հետ միասին 24 ժամը ընթացքում ուղարկել դատախազին՝ օրինականությունը ստուգելու նպատակով:
3. Որոշման պատճենն ուղարկել Արթուր Սաքունցին և Առաքել Մովսիսյանին՝ պարզաբանելով, որ որոշումը, համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի՝ կարող են բողոքարկել դրա պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում: Քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա վերադաս դատախազն այն ստանալու պահից 7 օրվա ընթացքում վերացնում է բողոքարկվող որոշումը, հարուցում է քրեական գործ և նախաքննություն կատարելու համար այն ուղարկում է քննիչին կամ հաստատում է քրեական գործ հարուցելը մերժելու օրինականությունը:

ՀՀ հատուկ քննչական ծառայության խոշտանգումների
և մարդու դեմ ուղղված հանցագործությունների
քննության վարչության պետի տեղակալ՝ Վ. Ավետիսյան